



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

6 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 137-Ա
ք. Երևան

«ՇԱՐԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳԻՐ ՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության կաբելային (մալուխային) հեռարձակման ցանցով սեփական արտադրության հեռուստածրագիր հեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի նոյեմբերի 19-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Բավարարել «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության դիմումը և տալ «5 պլուս» սեփական արտադրության հեռուստածրագիրը հեռարձակելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ

Վ. ՕՉԱՆՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 6
ք. Երևան